Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/3595/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

30 հունիսի 2023թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Մխեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/3595/02/23 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ստարկ Գրուպ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Հայցվոր կամ Ընկերություն)՝ ի դեմս ընկերության տնօրեն Արսեն Անտանոսյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ Վարդենիսի համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Համայնքապետարան)՝ հայցելով անվավեր ճանաչել (վերացնել) Վարդենիսի համայնքապետարանի 27.03.2023թ-ին «Ստարկ Գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումը:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատարան են մուտքագրվել 08.05.2023թ-ին, դատավորի աշխատակազմին են տրամադրվել 12.05.2023թ-ին:

Դատավորի աշխատակազմը Հայցվորին հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել է առկա թերության մասին, այն է՝ վճարված չէ պետական տուրքը և առաջարկվել է եռօրյա ժամկետում վերացնել թերությունը, սակայն Հայցվորը թերությունը չի վերացրել:

Դատարանը 19.05.2023թ. կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում, որը Հայցվորը առձեռն ստացել է 2023թ. հունիսի 21-ին և օրենքով սահմանված եռօրյա ժամկետում՝ 26.06.2023թ. կրկին ներկայացրել է Դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը մուտքագրվել է Դատարան 28.06.2023թ.-ին և դատավորի աշխատակազմին է հանձվել 29.06.2023թ.-ին:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող Վարդենիսի համայնքապետարանից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Վարդենիսի համայնքապետարանից պահանջել թիվ ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-23/24 ծածկագրով (այսուհետ՝ նաև Ծածկագիր) գնանշման հարցման ընթացակարգով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ՝

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

- հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023թ. օգոստոսի 01-ին դատական պաշտոնական կայքի միջոցով:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Դ. ՄԽԵՅԱՆ**